ՀՀ ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ (30.06.2015 Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)

Նյութում վերլուծված են միայն ՀՀ և ԼՂՀ տարածքներում ներգրավված և տեղաբաշխված միջոցները, ուստի ներկայացված տվյալները կարող են տարբերվել ՀՀ կենտրոնական բանկի այլ տեղեկատվական նյութերում հրապարակված տվյալներից, քանի որ վերջիններում ներառված են նաև ՀՀ տարածքից դուրս ներգրավված և տեղաբաշխված միջոցների մեծությունները:

30.06.2014-30.06.2015 թթ. ժամանակահատվածում


- ***Բանկային համակարգի վարկային ներդրումներն ավելացել են 9.0%-ով՝ գերազանցելով ՀՆԱ աճի տեմպը:***
- ***ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում վարկերի ընդհանուր աճի տեմպը գերազանցել է Երևանում վարկերի աճի տեմպը:***
- ***ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հիմնականում ավելացել են արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերին տրամադրված վարկերը:***
- ***Միջազգային վարկային ծրագրերով տրամադրված վարկերն ավելացել են 11.6%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում աճել է նաև վերջիններիս կշիռը և կազմել 14.2%:***
- ***Աճել են տարածքային հասանելիության ցուցանիշները՝ 1 շնչին և 1 մասնաճյուղին բաժին ընկնող ավանդների և վարկերի ծավալները:***

1. ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

30.06.2014-30.06.2015 թթ. ժամանակահատվածում (այսուհետ՝ հաշվետու տարում) բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալն ավելացել է 9.0%-ով և կազմել 2 տրլն 40.0 մլրդ դրամ:

Վարկային ներդրումների աճ գրանցվել է ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում: Առավել բարձր աճի տեմպ են ապահովել Արագածոտնի մարզը, ԼՂՀ-ն, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը՝ համապատասխանաբար 29.9%, 25.0%, 21.8% և 21.2% *(տե՛ս հավելված 1.5)*:

Գծապատկեր 1




** Պատկերի հստակության նպատակով Երևանի ցուցանիշները չեն ներառվել, Երևանում վարկային ներդրումների ծավալը 30.06.2015 թ. դրությամբ կազմել է 1 տրլն 321 մլրդ դրամ:*

Հաշվետու ժամանակահատվածում Երևանում վարկային ներդրումներն աճել են 6.3%-ով (77.8 մլրդ դրամով), իսկ ՀՀ մյուս մարզերում և ԼՂՀ-ում ընդհանուր վարկային ներդրումներն աճել են 14.3%-ով (89.9 մլրդ դրամով): Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 64.8% *(տե՛ս գծապատկեր 2, հավելված 1.2):*

Գծապատկեր 2

Ընդհանուր վարկային ներդրումների կառուցվածքն ըստ մարզերի




1. Երևան, 2. Արարատի մարզ, 3. Կոտայքի մարզ, 4.Արմավիրի մարզ, 5.Արագածոտնի մարզ, 6.Շիրակի մարզ, 7. Լոռու մարզ, 8. Գեղարքունիքի մարզ, 9. Տավուշի մարզ, 10. Վայոց ձորի մարզ, 11. Սյունիքի մարզ, 12. ԼՂՀ

2000-2015 թթ. վարկային ներդրումներում Երևանի մասնաբաժինը հիմնականում տատանվել է 63-70%-ի շրջանակներում *(տե՛ս գծապատկեր 3):*

Գծապատկեր 3

Վարկային ներդրումների միջմարզային կառուցվածքը



Հաշվետու տարում բանկային համակարգում ակտիվների քանակն աճել է 15.1%-ով: Նշված ժամանակահատվածում Երևանին բաժին ընկնող ակտիվների տեսակարար կշիռն աճել է 0.7 տոկոսային կետով և 30.06.2015 թ. դրությամբ կազմել 40.7%:

Հաշվետու ժամանակահատվածում.

- Արդյունաբերության վարկերն ավելացել են գրեթե բոլոր ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Երևանի և Գեղարքունիքի մարզի:
- Գյուղատնտեսության վարկերն ավելացել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում՝ բացառությամբ Լոռու մարզի: Գյուղատնտեսության վարկերը նվազել են նաև ԼՂՀ-ում:
- Առևտրի վարկերն ավելացել են ՀՀ մարզերի մեծ մասում՝ բացառությամբ Սյունիքի, Տավուշի, Արմավիրի և Լոռու մարզերի: Առևտրի վարկերը նվազել են նաև ԼՂՀ-ում:
- Սպառողական վարկերն ավելացել են Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի մարզերում և Երևանում:
- Հիփոթեքային վարկերն ավելացել են գրեթե բոլոր ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում՝ բացառությամբ Կոտայքի, Արմավիրի և Արարատի մարզերի:

Երևանում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտների, ինչպես նաև սպառողական և առևտրի ճյուղի վարկավորման աճով: Վերոնշյալ ճյուղերի վարկավորումը ավելացել է համապատասխանաբար 37.2%-ով (կամ 32.4 մլրդ դրամով) 10.7%-ով (կամ 23.4 մլրդ դրամով) և 8.2%-ով (կամ 22.6 մլրդ դրամով):

ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության (հիմնականում հանքագործության) և գյուղատնտեսության վարկերի աճով: Նշված ճյուղերի վարկավորումը (առանց Երևանի) ավելացել է համապատասխանաբար 19.5%-ով (կամ 27.1 մլրդ դրամով) և 21.4%-ով (կամ 21.1 մլրդ դրամով): Արդյունաբերության վարկերի առավել խոշոր աճ է արձանագրվել ԼՂՀ-ում (6.6 մլրդ դրամ), Շիրակի (3.5 մլրդ դրամ) և Արարատի մարզերում (2.0 մլրդ դրամ), գյուղատնտեսության վարկերի խոշոր աճ՝ Կոտայքի (6.3 մլրդ դրամ), Արարատի (3.3 մլրդ դրամ) և Արագածոտնի (3.0 մլրդ դրամ) մարզերում:

Ըստ տնտեսության ճյուղային բաշխվածության՝ հաշվետու տարում ընդհանուր վարկային ներդրումներում 1.5 տոկոսային կետով ավելացել է հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտների տեսակարար կշիռը: Փոխարենը նվազել են արդյունաբերության և ֆինանսական հատվածի վարկերի տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 1.6 և 1.2 տոկոսային կետով *(տե՛ս աղյուսակ 1.1):*

Աղյուսակ 1. Վարկային ներդրումների տեսակարար կշիռներն ըստ ճյուղերի


%

Ճյուղեր	**30.09.00**	**31.12.01**	**30.06.03**	**30.06.04**	**30.06.05**	**30.06.06**	**30.06.07**	**30.06.08**	**30.06.09**	**30.06.10**	**30.06.11**	**30.06.12**	**30.06.13**	**30.06.14**	**30.06.15**
Արդյունաբերություն	34	38	31	26	22	20	16	12	15	19	21	23	20	21	19
Գյուղատնտեսություն	8	11	10	7	8	6	6	5	7	6	6	6	6	6	7
Շինարարություն	2	3	4	4	4	4	5	6	7	8	8	7	6	6	6
Տրանսպորտ և կապ	2	2	1	1	2	2	1	2	2	3	3	3	3	2	3
Առևտուր	11	17	20	21	22	22	20	20	21	21	20	22	20	19	18
Ֆինանսական հատված	7	6	7	7	5	6	5	5	4	4	6	4	6	5	4
Սպառողական վարկեր	18	14	21	27	27	26	29	29	22	18	17	18	20	22	21
Հիփոթեքային					4	8	11	13	13	11	9	8	8	8	8
Այլ ճյուղեր	18	9	6	7	6	6	7	8	9	10	10	9	11	11	14
Այդ թվում՝ հանրային սնունդ և սպասարկման այլ ճյուղեր												5	6	6	7

Տնտեսության ճյուղերում ընդհանուր վարկերի բաշխվածությունը ըստ մարզերի բևեռացված բնույթ ունի և կենտրոնացված է Երևանում (բացառությամբ՝ գյուղատնտեսության ճյուղի. Երևանին բաժին է ընկնում գյուղատնտեսության ընդհանուր վարկերի 11%-ը) *(տե՛ս հավելված 1.2*): Գյուղատնտեսության ճյուղին տրամադրված վարկերում մեծ տեսակարար կշիռ ունեն Արմավիրի մարզը՝ 20.0%, Արարատի մարզը՝ 14.4%, Կոտայքի մարզը՝ 13.9% և Շիրակի մարզը՝ 9.9% (30.06.2014 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 23.1%, 14.7%, 11.3% և 9.3%), իսկ ամենափոքր տեսակարար կշիռը՝ ԼՂՀ-ն՝ 1.8%, Վայոց ձորի մարզը՝ 2.8% և Տավուշի մարզը՝ 2.8% (30.06.2014 թ.՝ համապատասխանաբար 2.8%, 2.2% և 2.8%):

Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ ՀՀ մարզերում (բացառությամբ՝ Երևանի) և ԼՂՀ-ում վարկային պորտֆելը չափավոր կենտրոնացված է. ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկավորման Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.01 կետով և հաշվետու ժամանակահատվածում կազմել 0.134: Նույն ցուցանիշի միջին մեծությունը ըստ ՀՀ մարզերի (բացառությամբ՝ Երևանի) և ԼՂՀ-ի կազմել է 0.184՝ վկայելով որոշ մարզերում վարկավորման ճյուղային համեմատաբար բարձր կենտրոնացվածության մասին *(տե՛ս գծապատկեր 4)*:


Գծապատկեր 4



Վարկային ներդրումների ժամկետայնության առումով հաշվետու տարում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռն աճել է 1.7 տոկոսային կետով և կազմել 83.7%:

30.06.15 թ. դրությամբ ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի ծավալները գերազանցել են կարճաժամկետ վարկերի ծավալները *(տե՛ս հավելված 1.3)*:


Գծապատկեր 5



Հաշվետու տարում վարկային ներդրումների կառուցվածքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռն աճել է 4.0 տոկոսային կետով և 30.06.15 թ. դրությամբ կազմել ընդհանուր վարկերի 65.7%-ը *(տե՛ս հավելված 1.4):*

ՀՀ մարզերի մեծ մասում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը գերազանցել է դրամային վարկերի տեսակարար կշիռը՝ բացառությամբ Վայոց ձորի, Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերի *(տե՛ս հավելված 1.4):*


Գծապատկեր 6



Հաշվետու տարում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալները գրեթե չեն փոփոխվել և կազմել են 507.3 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 1.7):* Ընդհանուր վարկային ներդրումների կազմում փոքր և միջին բիզնեսին[1] տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2.2 տոկոսային կետով և 30.06.15 թ. դրությամբ կազմել 24.9% *(տե՛ս հավելված 1.1):* Փոքր և միջին բիզնեսին համակարգի կողմից տրամադրված ընդհանուր վարկերում Երևանի մասնաբաժինը նվազել 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 65.2% *(տե՛ս հավելված 1.2):*

Միջազգային վարկային ծրագրերով[2] տրամադրված վարկերը հաշվետու տարում աճել են 11.6%-ով կամ 30.1 մլրդ դրամով և 30.06.2015 թ. դրությամբ կազմել 289.4 մլրդ դրամ: Արդյունքում, նախորդ տարվա համեմատ, միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 0.3 տոկոսային կետով և հաշվետու տարվա վերջին կազմել 14.2% *(տե՛ս գծապատկեր 7):*

Գծապատկեր 7




[1] *Փոքր և միջին բիզնեսը ներառում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը մինչև 100 աշխատող է:*

[2] *Միջազգային ծրագրերով (օր. Գերմանա-հայկական հիմնադրամի ծրագրեր, Համաշխարհային բանկի Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր և այլն) բանկերի միջնորդությամբ տրամադրված վարկերը:*


Միջազգային վարկային ծրագրերով տրամադրված միջոցները Երևանում ավելացել են 19.1%-ով և հաշվետու տարվա վերջին կազմել 207.6 մլրդ դրամ: ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում միջազգային վարկային ծրագրերով տրամադրված վարկերը նվազել են 3.8%-ով և 30.06.2015 թ. դրությամբ կազմել 81.8 մլրդ դրամ: Միջազգային վարկային ծրագրերով տրամադրված վարկերի նվազում է գրանցվել Արմավիրի, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռու մարզերում և ԼՂՀ-ում: Արդյունքում, նախորդ տարվա համեմատ, Երևանի մասնաբաժինը միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցներում աճել է 4.5 տոկոսային կետով և 30.06.2015 թ. կազմել 71.7% *(տե՛ս գծապատկեր 8):*

Գծապատկեր 8




Մարզերին տրամադրված ընդհանուր վարկերում միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում տրամադրված միջոցների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ նվազել է 2.5 տոկոսային կետով և կազմել է 11.4% *(տե՛ս հավելված 1.1):*

Գծապատկեր 9



Ըստ վարկային ներդրումների վերադարձելիության՝ հաշվետու տարում ժամկետանց վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 1.1 տոկոսային կետով՝ 30.06.15 թ. դրությամբ կազմելով ընդհանուր վարկային ներդրումների 3.7%-ը *(տե՛ս հավելված 1.1 և գծապատկեր 10):*



Ինչպես երևում է գծապատկեր 10-ից, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է Շիրակի (5.8%), Լոռու (4.8%) մարզերում և ԼՂՀ-ում (4.6%): Երևանում ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը 3.8% է:

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները

30.06.15 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 32 վարկային կազմակերպություններ, որոնց տրամադրած ընդհանուր վարկերի ծավալը կազմել է 195.5 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի ծավալի 9.6%-ը (30.06.14թ.՝ 9.1%-ը):

Հաշվետու ժամանակահատվածում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերն ավելացել են 14.6%-ով (24.8 մլրդ դրամով)՝ հիմնականում սպառողական և գյուղատնտեսության վարկերի աճի հաշվին:

2003-2015 թթ. վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 2. Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի

Տնտեսության ճյուղեր	***Վարկերի ծավալ*** *(մլն ՀՀ դրամ)*												
	30.06.03	30.06.04	30.06.05	30.06.06	30.06.07	30.06.08	30.06.09	30.06.10	30.06.11	30.06.12	30.06.13	30.06.14	30.06.15
Արդյունաբերություն	718	497	1371	2203	3544	4817	7054	8609	3716	11130	20498	16606	15417
այդ թվում՝ սննդի	591	313	742	1152	1196	1494	1584	1544	839	2654	6434	5585	4812
Գյուղատնտեսություն	269	312	537	1046	2481	6676	4790	12529	16797	27245	34815	43756	53634
Առևտուր	54	111	270	1235	6969	9151	7561	10283	12018	17867	19138	21604	21696
Շինարարություն	121	89	112	193	1253	5482	9148	1559	2015	4205	3661	5474	4554
Սպառողական (ներառյալ՝ հիփոթեք)	492	864	1584	2396	8455	13368	12953	9602	16334	26903	30259	33035	29168
Այլ ճյուղեր	324	315	832	1434	5822	13316	10707	16209	23428	35319	31018	44566	66186
Ընդամենը	1977	2185	4706	8508	28525	52811	53798	60335	74311	122670	139390	170626	195467

Հաշվետու տարում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում (տե՛ս աղյուսակ 3): Արդյունքում՝ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ընդհանուր վարկերում 2.4 տոկոսային կետով նվազել է ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող Երևանի մասնաբաժինը՝ կազմելով 48.1%:

Աղյուսակ 3. Վարկերն ըստ մարզերի (հազար ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	Երևան	Արարատ	Կոտայք	Արմավիր	Լոռի	Շիրակ	Գեղարքունիք	Տավուշ	Վայոց ձոր	Սյունիք	ԼՂՀ
30.06.03											
վարկերի ծավալները	732523	140711	347977	328411	24715	10955	18282	5198	31693	8359	328640	-
տեսակարար կշիռները (%)	37.0	7.1	17.6	16.6	1.2	0.6	0.9	0.3	1.6	0.4	16.6	-
30.06.04											
վարկերի ծավալները	1464134	76409	28056	41233	75318	18110	26532	12726	70551	30724	341034	-
տեսակարար կշիռները (%)	67.0	3.5	1.3	1.9	3.4	0.8	1.2	0.6	3.2	1.4	15.6	-
30.06.05											
վարկերի ծավալները	3054690	38852	216496	127993	142609	165228	199822	40155	165667	55467	498759	-
տեսակարար կշիռները (%)	64.9	0.8	4.6	2.7	3.0	3.5	4.3	0.9	3.5	1.2	10.6	-
30.06.06											
վարկերի ծավալները	5133064	223093	481738	238415	183164	403482	443152	183109	117965	71290	910830	118594
տեսակարար կշիռները (%)	60.3	2.6	5.7	2.8	2.2	4.7	5.2	2.2	1.4	0.8	10.7	1.4
30.06.07											
վարկերի ծավալները	18824712	1033694	941069	1499227	534782	1062152	1300085	573330	512376	210739	434469	598130
տեսակարար կշիռները (%)	66.0	3.6	3.3	5.3	1.9	3.7	4.6	2.0	1.8	0.7	5.0	2.1
30.06.08											
վարկերի ծավալները	34953514	1877424	2126097	2842366	1097859	1720411	2223500	1038964	1136956	362216	2171493	1260057
տեսակարար կշիռները (%)	66.2	3.6	4.0	5.4	2.1	3.3	4.2	2.0	2.2	0.7	4.1	2.4
30.06.09											
վարկերի ծավալները	36619084	1499920	1948526	2469149	771746	1682260	2394086	691453	1879617	1308447	1761307	772197
տեսակարար կշիռները (%)	68.1	2.8	3.6	4.6	1.4	3.1	4.5	1.3	3.5	2.4	3.3	1.4
30.06.10											
վարկերի ծավալները	33718369	4475028	2224890	4897139	1561345	2045382	2085920	1664782	1168453	544999	2448781	3499700
տեսակարար կշիռները (%)	55.9	7.4	3.7	8.1	2.6	3.4	3.5	2.8	1.9	0.9	4.1	5.8
30.06.11											
վարկերի ծավալները	42298191	5323052	3528503	5805633	2095744	2399728	2163775	1857234	1271198	935024	2349826	4283043
տեսակարար կշիռները (%)	56.9	7.2	4.7	7.8	2.8	3.2	2.9	2.5	1.7	1.3	3.2	5.8
30.06.12											
վարկերի ծավալները	71987720	8127209	4838759	9563430	3288168	4545315	3329705	3026427	2126939	1384996	4395021	6055814
տեսակարար կշիռները (%)	58.7	6.6	3.9	7.8	2.7	3.7	2.7	2.5	1.7	1.1	3.6	4.9
30.06.13											
վարկերի ծավալները	69694762	10853031	6470949	15369650	4197589	6377971	4979263	3895519	3240742	2387199	6081608	5571881
տեսակարար կշիռները (%)	50.2	7.8	4.6	11.0	3.0	4.6	3.6	2.8	2.3	1.7	4.4	4.0
30.06.14											
վարկերի ծավալները	86055721	14455722	7882693	13725851	4957234	7039449	6339930	5501061	4679325	3179075	8260865	8549310
տեսակարար կշիռները (%)	50.4	8.5	4.6	8.0	2.9	4.1	3.7	3.2	2.7	1.9	4.8	5.0
30.06.15											
վարկերի ծավալները	93967102	16316554	8497593	16820858	7207943	8864299	8643049	7565328	5789734	3359174	9541423	8893598
տեսակարար կշիռները (%)	48.1	8.3	4.3	8.6	3.7	4.5	4.4	3.9	3.0	1.7	4.9	4.5


2. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ

Բանկերի կողմից ներգրավված միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացել են 7.6%-ով և հաշվետու տարվա վերջին կազմել 1 տրլն 545 մլրդ դրամ, ընդ որում՝ ՀՀ բոլոր մարզերում արձանագրվել է ավանդների աճ, իսկ ԼՂՀ-ում՝ նվազում: Հաշվետու տարում ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցներն ավելացել են 13.2%-ով, իսկ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները նվազել են 3.5%-ով և կազմել համապատասխանաբար 1 տրլն 84 մլդ դրամ և 460.5 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 1.5 և 1.7):*

ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արձանագրվել է ֆիզիկական անձանցից ներգրաված միջոցների աճի միտում:

Հաշվետու տարում ներգրավված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 83.9%: Ֆիզիկական անձանցից ներգրաված միջոցների կենտրոնացվածությունը Երևանում նվազել է 1.6 տոկոսային կետով, իսկ իրավաբանական անձանցից ներգրաված միջոցներինը աճել է 3.3 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 81.6% և 89.4% *(տե՛ս հավելված 2.2):*


Գծապատկեր 11



** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.15 թ. դրությամբ ավանդների ծավալը կազմել է 1 տրլն 297 մլրդ դրամ:*


Ընդհանուր ներգրավված միջոցների կազմում ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը աճել է 3.5 տոկոսային կետով՝ կազմելով 70.2% *(տե՛ս հավելված 2.1 և գծապատկեր 12):* 30.06.15 թ. դրությամբ ֆիզիկական անձանց ավանդները գերակշռել են ինչպես ՀՀ բոլոր մարզերում, այնպես էլ ԼՂՀ-ում:

Գծապատկեր 12



Ըստ ներգրավված միջոցների ժամկետայնության՝ հաշվետու տարում ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է 3.4 տոկոսային կետով և կազմել 72.6%: Գրեթե բոլոր ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում ժամկետային ավանդների ծավալները գերազանցել են ցպահանջ ավանդների ծավալները՝ բացառությամբ Արարատի մարզի *(տե՛ս հավելված 2.3 և գծապատկեր 13):*

Գծապատկեր 13




30.06.15 թ. Երևանին բաժին է ընկել ընդհանուր ցպահանջ ավանդների 85.2%-ը, ընդհանուր ժամկետային ավանդների 83.4%-ը:

Ցպահանջ միջոցների գերակշիռ մասը (61.5%-ը) իրավաբանական անձանց միջոցներն են: Ժամկետային միջոցների գերակշիռ մասը (79.7%-ը) ֆիզիկական անձանց ավանդներն են, ինչը արտահայտված է ՀՀ բոլոր մարզերում *(տե՛ս հավելվածներ 2.5 և 2.7):*

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, ՀՀ դրամով ավանդների տեսակարար կշիռը նվազել է 2.2 տոկոսային կետով և 30.06.15 թ. դրությամբ կազմել ընդհանուր ներգրավված միջոցների 30.2%-ը: ՀՀ մարզերի մեծ մասում և ԼՂՀ-ում դրամով ավանդների տեսակարար կշիռը գերազանցել է արտարժույթով ներգրավված ավանդների տեսակարար կշիռը՝ բացառությամբ Երևանի, Արարատի, Արագածոտնի և Շիրակի մարզերի *(տե՛ս հավելված 2.4 և գծապատկեր 14):*

Գծապատկեր 14




Ըստ ներգրավման աղբյուրների՝ 30.06.15 թ. դրությամբ արտարժույթով ներգրավված միջոցների 34.5%-ը, իսկ դրամով ներգրավված միջոցների 27.8%-ը հավաքագրվել է իրավաբանական անձանցից *(տե՛ս հավելվածներ 2.9 և 2.11):*

3. ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

30.06.15 թ. դրությամբ բանկային համակարգի կողմից ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը զիջել է վարկային ներդրումների ծավալին ՀՀ բոլոր մարզերում *(տե՛ս գծապատկեր 15)*:

Գծապատկեր 15




** Պատկերի հստակության նպատակով Երևանի տվյալները ներառված չեն, որտեղ 30.06.15 թ. ներգրավված միջոցները կազմել են 1 տրլն 296.7 մլրդ դրամ, վարկերն առանց միջազգային ծրագրերով տրամադրված վարկերի՝ 1 տրլն 113.5 մլրդ դրամ, ընդհանուր վարկերը՝ 1 տրլն 321 մլրդ դրամ:*

Հաշվետու տարում վարկային ներդրումների և ավանդների հարաբերակցությունը աճել է 1.6 տոկոսային կետով և կազմել է 132.0%:

Վարկային ներդրումների և ավանդների հարաբերակցությունը առավել ցածր է Երևանում (101.9%) և Սյունիքի մարզում (213.6%):


Տարածքային ստորաբաժանումների բաշխվածության առումով՝ մեկ մասնաճյուղին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները հաշվետու տարում ավելացել են համապատասխանաբար 148 մլն դրամով և 241 մլն դրամով և 30.06.15 թ. դրությամբ կազմել են 3.0 մլրդ դրամ և 4.0 մլրդ դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 16)*:

Գծապատկեր 16



Մեկ շնչին բաժին ընկնող ներգրավված միջոցների և վարկային ներդրումների ծավալները դարձյալ դրսևորել են աճի միտումներ. աճել են համապատասխանաբար 7.8%-ով և 9.1%-ով և 30.06.15 թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար 490 հազար դրամ և 647 հազար դրամ *(տե՛ս հավելված 3 և գծապատկեր 17)*:

Գծապատկեր 17



4. ԱՄՓՈՓՈՒՄ

30.06.14-30.06.15 թթ. ժամանակահատվածում

1. Վարկերն ավելացել են ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում: Ավանդների աճ է արձանագրվել ՀՀ բոլոր մարզերում, իսկ նվազում՝ ԼՂՀ-ում: Վարկերի աճի տեմպը (9.0% աճ) գերազանցել է ավանդների աճի տեմպը (7.6% աճ) և վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշը կազմել է 132%:
2. Նշված ժամանակահատվածի հատկանշական փոփոխություններն են.

- Մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ վարկերը նվազել են 1.3%-ով, 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերն ավելացել են 11.2%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկերում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ վարկերի տեսակարար կշիռը աճել է 1.7 տոկոսային կետով և կազմել 83.7%:
- ՀՀ դրամով տրամադրված վարկերը նվազել են 2.4%-ով, իսկ արտարժույթով տրամադրված վարկերն ավելացել են 16.0%-ով, ինչի արդյունքում դրամային վարկերի տեսակարար կշիռը նվազել է 4.0 տոկոսային կետով և կազմել է 34.3%: ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում արտարժութային վարկերի տեսակարար կշիռն ընդհանուրում աճել է:
- Դրամային ավանդներն ավելացել են 0.6%-ով, իսկ արտարժույթով ավանդները՝ 11.0%-ով, ինչի արդյունքում արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը աճել է 2.1 տոկոսային կետով և կազմել է ընդհանուր ավանդների 69.8%-ը: Արտարժութային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդներում աճել է ՀՀ գրեթե բոլոր մարզերում՝ բացառությամբ Վայոց ձորի մարզի և ԼՂՀ-ի:
- Ժամկետային ավանդներն ավելացել են 12.9%-ով, իսկ ցպահանջ ավանդները նվազել են 4.2%-ով, ինչի արդյունքում ժամկետային ավանդների տեսակարար կշիռն աճել է 3.4 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ավանդների 72.6%-ը:

30.06.15 թ. դրությամբ

Ըստ տեղաբաշխված ոլորտների՝ մարզերում տեղաբաշխված վարկային ներդրումներում տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է սպառողական, արդյունաբերության և առևտրի ճյուղերում *(տե՛ս հավելված 1.1).*

Արդյունաբերության ճյուղ. ՀՀ բոլոր մարզերում և ԼՂՀ-ում բավականին բարձր է արդյունաբերության վարկերի տեսակարար կշիռը (տատանվում է 11% - 33%-ի միջակայքում), իսկ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արարատի և Սյունիքի մարզերը (32.7% և 32.5%):

Առևտրի ճյուղ. առևտրի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 4% - 23%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, Կոտայքի և Շիրակի մարզերը, որտեղ տրամադրված ընդհանուր վարկերի համապատասխանաբար 22.5%-ը, 15.8%-ը և 15.1%-ը հատկացված է առևտրի ճյուղին:

Սպառողական վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում սպառողական վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 11% - 46%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Գեղարքունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերը, որտեղ սպառողական վարկերի տեսակարար կշիռը համապատասխանաբար 45.8%, 36.6% և 34.9% է:

Հիփոթեքային վարկեր. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 3%-10%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Երևանը, ԼՂՀ-ն և Վայոց ձորի մարզը՝ համապատասխանաբար 9.6%, 7.5% և 7.0%:

Շինարարության ճյուղ. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում շինարարության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1%-8%-ի միջակայքում: Համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն ԼՂՀ-ն, Երևանը և Կոտայքի մարզը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 7.6%-ը, 6.7%-ը և 3.8%-ը հատկացված են այս ճյուղին:

Գյուղատնտեսության ճյուղ. ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի ընդհանուր վարկերում գյուղատնտեսության վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1%-32%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերը, որտեղ գյուղատնտեսությանը հատկացված են ընդհանուր վարկերի համապատասխանաբար 31.5%-ը, 26.4%-ը և 23.6%-ը, իսկ ամենափոքր տեսակարար կշիռն ունի Երևանը՝1.2%:

Հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ. այս ոլորտի վարկերի տեսակարար կշիռը տատանվում է 1%-17%-ի միջակայքում: Ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Տավուշի մարզը և Երևանը՝ համապատասխանաբար 17.1% և 9.0%:

Տրանսպորտի և կապի ճյուղ. բոլոր մարզերում այս ճյուղին տրամադրած վարկերն ունեն շատ փոքր տեսակարար կշիռ՝ 0%-4%: Ամենամեծ տեսակարար կշիռ ունեն Երևանը, Կոտայքի և Շիրակի մարզերը, որտեղ տրամադրված վարկերի համապատասխանաբար 3.8%-ը, 1.8%-ը և 1.5%-ը հատկացված է այս ճյուղին:

Հավելված 1.1

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային կառուցվածքը (30.06.15 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

Ցուցանիշներ	Երևան	Արարատի մարզ	Արագածոտնի մարզ	Արմավիրի մարզ	Վայոց ձորի մարզ	Գեղարքունիքի մարզ	Լոռու մարզ	Կոտայքի մարզ	Սյունիքի մարզ	Տավուշի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ												
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	17.1	32.7	18.2	28.6	20.6	15.4	23.1	11.0	28.0	30.5	32.5	20.3	19.2
հանքագործական	8.8	31.5	1.9	15.6	1.9	0.0	50.1	0.3	0.4	1.4	61.4	41.0	15.3
էներգետիկա	33.6	9.6	17.9	13.0	53.5	53.7	13.7	64.8	82.1	62.4	24.6	37.9	32.1
սննդամթերք	25.2	47.5	46.7	40.3	30.2	27.6	8.4	15.2	13.8	34.9	1.4	5.3	25.9
թեթև	5.9	0.7	1.0	4.4	3.7	7.1	8.7	3.4	1.4	0.0	0.3	2.6	4.7
քիմիական	1.4	2.2	0.2	19.2	0.3	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.1	2.2
շինանյութերի	9.1	2.2	14.1	3.6	2.8	1.0	2.0	9.2	1.6	0.8	0.1	1.2	6.7
բանկարժեք իրեր	1.9	0.1	1.9	0.1	0.0	0.1	0.0	0.0	0.3	0.0	0.1	0.0	1.2
մետալուրգիա	3.3	0.0	0.0	0.0	0.0	0.7	12.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.4
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	2.0	0.1	0.4	1.2	0.8	0.3	0.9	4.5	0.0	0.1	0.0	0.2	1.4
արդյունաբերության այլ ճյուղեր	8.8	6.0	16.0	2.7	6.9	9.5	3.2	2.5	0.4	0.3	12.0	11.7	8.2
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	1.2	23.6	19.3	31.5	26.4	16.8	8.7	17.1	13.0	14.3	14.2	2.1	6.6
անասնապահություն	11.8	22.1	38.3	31.3	70.4	41.9	73.4	58.9	82.7	68.0	53.6	70.4	40.7
բուսաբուծություն	88.2	77.9	61.7	68.7	29.6	58.1	26.6	41.1	17.3	32.0	46.4	29.6	59.3
1.3. շինարարություն	6.7	0.7	3.8	1.3	2.0	4.3	6.9	0.5	2.5	1.1	1.6	7.6	5.6
1.4. տրանսպորտ և կապ	3.8	0.9	1.8	0.8	0.2	1.5	0.7	0.1	0.0	0.2	0.1	0.4	2.7
1.5. առևտուր, այդ թվում՝	22.5	12.9	15.8	6.1	9.2	15.1	13.8	12.1	6.3	5.8	10.0	4.1	18.2
մեծածախ առևտուր	57.2	41.7	61.4	20.9	35.1	33.7	21.5	19.3	5.5	4.0	40.1	25.4	53.0
մանրածախ առևտուր	41.7	57.7	38.6	78.9	64.9	64.3	77.4	80.7	89.2	96.0	59.7	74.6	46.0
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	9.0	1.4	2.9	1.0	6.2	4.6	2.0	6.0	17.1	3.0	4.4	3.8	7.2
1.7. ֆինանսական հատված	5.1	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	10.1	3.9
1.8. սպառողական վարկեր	18.4	22.9	27.9	24.8	22.1	33.7	36.6	45.8	28.3	34.9	29.8	10.8	21.3
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	9.6	3.3	5.1	4.5	4.1	6.8	6.6	5.9	3.0	7.0	5.8	7.5	8.2
1.10. տնտեսության այլ ճյուղեր	6.5	1.6	5.3	1.3	9.2	1.9	1.5	1.6	1.8	3.3	1.6	33.4	7.0
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
2.1. ժամկետանց	3.8	3.3	3.1	2.3	2.4	5.8	4.8	3.2	1.8	2.9	2.3	4.6	3.7
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	15.7	10.2	13.1	10.5	13.9	15.2	10.9	12.2	9.4	29.4	13.0	3.8	14.2
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ՝ միջազգային ծրագրերով)	25.0	28.8	27.7	24.0	16.5	30.4	35.8	17.8	27.7	15.8	21.4	16.9	24.9
3. Ակտիվների քանակը	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
3.1. մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	93.0	97.2	96.9	96.7	97.0	96.9	97.1	97.5	98.3	97.8	97.2	94.4	95.4
3.2. 5001-10000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	2.4	1.3	1.3	1.8	1.5	1.5	1.4	1.2	0.9	1.2	1.6	2.3	1.8
3.3. 10001-25000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	2.4	0.8	1.1	0.9	0.9	1.0	0.9	0.8	0.5	0.6	0.8	2.0	1.5
3.4. 25001-50000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.1	0.3	0.4	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.2	0.2	0.2	0.7	0.6
3.5. 50001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	1.2	0.3	0.3	0.3	0.3	0.3	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.6	0.6

Հավելված 1.2

Ընդհանուր վարկային ներդրումների միջմարզային ճյուղային կառուցվածքը (30.06.15 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են համակարգի՝ տվյալ ճյուղին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

Ցուցանիշներ	Երևան	Արարատի մարզ	Կոտայքի մարզ	Արմավիրի մարզ	Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ	Լոռու մարզ	Գեղարքունիքի մարզ	Տավուշի մարզ	Վայոց ձորի մարզ	Սյունիքի մարզ	ԼՂՀ	Ընդամենը
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ													
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	57.5	6.9	4.5	6.3	2.5	3.1	3.9	1.0	2.1	2.1	4.0	6.2	100.0
հանքագործական	33.0	14.2	0.5	6.4	0.3	0.0	12.8	0.0	0.1	0.2	15.9	16.6	100.0
էներգետիկա	60.2	2.1	2.5	2.5	4.1	5.2	1.7	2.1	5.2	4.0	3.0	7.3	100.0
սննդամթերք	56.0	12.7	8.1	9.7	2.9	3.3	1.3	0.6	1.1	2.8	0.2	1.3	100.0
թեթև	72.9	1.1	0.9	5.9	2.0	4.7	7.3	0.8	0.6	0.0	0.3	3.5	100.0
քիմիական	35.9	7.0	0.3	55.2	0.3	0.0	1.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	100.0
շինանյութերի	78.8	2.3	9.5	3.3	1.0	0.5	1.2	1.4	0.5	0.3	0.1	1.1	100.0
թանկարժեք իրեր	90.8	0.4	7.1	0.3	0.0	0.3	0.1	0.0	0.5	0.0	0.2	0.0	100.0
մետալուրգիա	78.6	0.0	0.0	0.0	0.0	1.0	20.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	83.8	0.4	1.3	5.3	1.4	0.6	2.5	3.4	0.0	0.2	0.0	1.0	100.0
արդյունաբերության այլ ճյուղեր	61.7	5.1	8.8	2.0	2.1	3.6	1.5	0.3	0.1	0.1	5.8	8.9	100.0
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	11.3	14.4	13.9	20.0	9.2	9.9	4.3	4.7	2.8	2.8	5.0	1.8	100.0
անասնապահություն	3.3	7.8	13.0	15.4	15.8	10.2	7.8	6.8	5.6	4.7	6.6	3.1	100.0
բուսաբուծություն	16.9	19.0	14.4	23.2	4.6	9.7	1.9	3.2	0.8	1.5	3.9	0.9	100.0
1.3. շինարարություն	77.8	0.5	3.2	1.0	0.8	3.0	4.1	0.2	0.6	0.3	0.7	8.0	100.0
1.4. տրանսպորտ և կապ	90.1	1.4	3.1	1.3	0.1	2.1	0.8	0.1	0.0	0.1	0.1	0.8	100.0
1.5. առևտուր, այդ թվում՝	80.0	2.9	4.1	1.4	1.2	3.2	2.5	1.2	0.5	0.4	1.3	1.3	100.0
մեծածախ առևտուր	86.5	2.3	4.8	0.6	0.8	2.1	1.0	0.4	0.1	0.0	1.0	0.6	100.0
մանրածախ առևտուր	72.5	3.6	3.5	2.4	1.6	4.5	4.1	2.1	1.0	0.9	1.7	2.1	100.0
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	81.4	0.8	1.9	0.6	2.0	2.5	0.9	1.5	3.4	0.5	1.4	3.1	100.0
1.7. ֆինանսական հատված	84.7	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	15.2	100.0
1.8. սպառողական վարկեր	56.1	4.4	6.2	4.9	2.4	6.2	5.6	3.9	1.9	2.1	3.3	3.0	100.0
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	76.1	1.6	3.0	2.3	1.2	3.2	2.6	1.3	0.5	1.1	1.6	5.4	100.0
1.10. տնտեսության այլ ճյուղեր	60.2	0.9	3.6	0.8	3.0	1.1	0.7	0.4	0.4	0.6	0.5	27.9	100.0
2. Մարզի ընդհանուր վարկային ներդրումների տեսակարար կշիռը բանկային համակարգի վարկային ներդրումներում, այդ թվում՝	64.8	4.1	4.8	4.2	2.3	3.9	3.3	1.8	1.4	1.3	2.3	5.9	100.0
2.1. ժամկետանց	65.9	3.6	4.0	2.6	1.5	6.1	4.2	1.6	0.7	1.0	1.5	7.3	100.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	71.7	2.9	4.4	3.1	2.3	4.2	2.5	1.6	0.9	2.7	2.1	1.6	100.0
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր (ներառյալ՝ միջազգային ծրագրերով)	65.2	4.7	5.3	4.1	1.5	4.8	4.7	1.3	1.6	0.8	2.0	4.0	100.0
3. Ակտիվների քանակը	40.7	6.7	7.7	7.4	3.7	8.3	7.4	4.4	2.9	3.0	4.5	3.3	100.0
3.1. մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	39.7	6.9	7.8	7.5	3.7	8.4	7.5	4.5	3.0	3.0	4.5	3.3	100.0
3.2. 5001-10000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	52.5	4.9	5.5	7.4	3.0	6.6	5.8	2.9	1.4	2.0	3.8	4.2	100.0
3.3. 10001-25000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	63.0	3.6	5.4	4.6	2.1	5.5	4.6	2.3	0.9	1.2	2.4	4.4	100.0
3.4. 25001-50000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	72.3	3.2	4.3	3.1	1.8	4.0	3.1	2.0	0.7	0.7	1.3	3.5	100.0
3.5. 50001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	73.7	3.4	4.1	3.3	1.5	3.6	2.7	1.3	0.8	0.7	1.4	3.4	100.0

Հավելված 1.3

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ ժամկետների (30.06.15 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

Ցուցանիշներ	Երևան		Արտաշատի մասնաճյուղ		Գավառի մասնաճյուղ		Աբովյանի մասնաճյուղ		Արտաշատի մասնաճյուղ		Շիրակի մասնաճյուղ		Լոռու մասնաճյուղ		Գեղարքունիքի մասնաճյուղ		Տավուշի մասնաճյուղ		Վայոց ձորի մասնաճյուղ		Սյունիքի մասնաճյուղ		ԼՂՀ		Ընդամենը	
	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև	մինչև 1 տարի	1 տարուց վերև
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ																										
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	0.3	20.3	5.4	10.0	9.7	13.4	0.4	10.6	0.0	28.0	1.0	29.5	17.7	14.8	2.6	17.6	3.5	15.7	0.3	20.3	5.4	10.0	9.7	13.4	0.4	10.6
հանքագործական	0.0	1.9	0.0	0.0	36.1	13.9	0.0	0.2	0.0	0.4	0.0	1.4	43.5	17.9	11.8	29.2	8.3	7.1	0.0	1.9	0.0	0.0	36.1	13.9	0.0	0.2
էներգետիկա	0.1	53.4	33.8	19.9	0.1	13.7	3.4	61.4	0.0	82.1	3.1	59.4	2.2	22.4	0.4	37.5	4.7	27.4	0.1	53.4	33.8	19.9	0.1	13.7	3.4	61.4
սննդամթերք	0.9	29.3	0.9	26.7	4.6	3.8	0.1	15.0	0.0	13.8	0.2	34.7	0.1	1.4	0.8	4.5	1.7	24.2	0.9	29.3	0.9	26.7	4.6	3.8	0.1	15.0
թեթև	0.4	3.3	0.1	7.0	1.0	7.7	0.1	3.3	0.0	1.4	0.0	0.0	0.0	0.3	0.0	2.6	0.2	4.5	0.4	3.3	0.1	7.0	1.0	7.7	0.1	3.3
քիմիական	0.0	0.3	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.5	1.6	0.0	0.3	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.0
շինանյութերի	0.0	2.8	0.0	1.0	0.0	2.0	0.0	9.2	0.0	1.6	0.2	0.7	0.0	0.1	0.0	1.1	0.4	6.2	0.0	2.8	0.0	1.0	0.0	2.0	0.0	9.2
թանկարժեք իրեր	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.3	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	1.2	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0
մետալուրգիա	0.0	0.0	0.0	0.7	0.0	12.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.3	1.1	0.0	0.0	0.0	0.7	0.0	12.4	0.0	0.0
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	0.0	0.8	0.0	0.3	0.1	0.8	0.0	4.5	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.2	0.1	1.3	0.0	0.8	0.0	0.3	0.1	0.8	0.0	4.5
արդյունաբերության այլ ճյուղեր	0.0	6.9	0.1	9.4	0.0	3.2	0.0	2.5	0.0	0.4	0.0	0.3	8.7	3.3	0.0	11.7	0.8	7.4	0.0	6.9	0.1	9.4	0.0	3.2	0.0	2.5
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	1.1	25.3	2.8	14.0	1.3	7.4	3.5	13.7	1.7	11.3	3.1	11.1	3.5	10.7	0.3	1.7	0.7	5.9	1.1	25.3	2.8	14.0	1.3	7.4	3.5	13.7
անասնապահություն	1.2	69.2	1.0	40.8	5.6	67.9	7.8	51.1	3.9	78.8	2.3	65.8	2.2	51.4	2.1	68.2	2.1	38.6	1.2	69.2	1.0	40.8	5.6	67.9	7.8	51.1
բուսաբուծություն	2.8	26.8	15.4	42.8	9.6	17.0	12.5	28.6	8.9	8.3	19.6	12.4	22.5	23.9	13.4	16.3	8.3	50.9	2.8	26.8	15.4	42.8	9.6	17.0	12.5	28.6
1.3. շինարարություն	0.0	2.0	0.3	4.0	0.1	6.8	0.1	0.4	0.0	2.4	0.2	0.9	0.0	1.5	0.6	6.9	0.3	5.2	0.0	2.0	0.3	4.0	0.1	6.8	0.1	0.4
1.4. տրանսպորտ և կապ	0.0	0.2	0.0	1.5	0.0	0.7	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.2	0.0	0.1	0.0	0.4	0.4	2.3	0.0	0.2	0.0	1.5	0.0	0.7	0.0	0.1
1.5. առևտուր, այդ թվում՝	0.2	8.9	0.3	14.8	1.7	12.0	1.3	10.7	0.1	6.3	0.2	5.6	0.3	9.7	0.2	3.9	3.3	14.9	0.2	8.9	0.3	14.8	1.7	12.0	1.3	10.7
մեծածախ առևտուր	1.3	33.8	0.8	32.9	11.2	10.3	9.1	10.1	0.0	5.5	0.0	4.0	0.5	39.6	1.4	23.9	14.8	38.1	1.3	33.8	0.8	32.9	11.2	10.3	9.1	10.1
մանրածախ առևտուր	1.4	63.5	1.0	63.2	1.3	76.0	1.9	78.7	1.4	87.9	3.3	92.7	2.2	57.6	2.6	72.0	3.4	42.6	1.4	63.5	1.0	63.2	1.3	76.0	1.9	78.7
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	0.0	6.2	0.2	4.3	0.2	1.9	0.0	5.9	1.3	15.9	0.4	2.6	0.0	4.4	0.0	3.8	0.2	7.0	0.0	6.2	0.2	4.3	0.2	1.9	0.0	5.9
1.7. ֆինանսական հատված	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	6.5	3.7	3.3	0.6	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0
1.8. սպառողական վարկեր	6.2	15.9	10.9	22.9	6.6	30.0	18.6	27.2	7.4	20.8	9.1	25.8	6.8	23.0	2.7	8.1	3.9	17.4	6.2	15.9	10.9	22.9	6.6	30.0	18.6	27.2
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	0.0	4.1	0.0	6.7	0.0	6.6	0.0	5.9	0.0	3.0	0.1	6.9	0.0	5.7	0.0	7.5	0.0	8.2	0.0	4.1	0.0	6.7	0.0	6.6	0.0	5.9
1.10. տնտեսության այլ ճյուղեր	0.3	8.9	0.2	1.7	0.2	1.3	0.2	1.4	0.2	1.6	0.0	3.3	0.7	0.9	6.6	26.8	0.6	6.4	0.3	8.9	0.2	1.7	0.2	1.3	0.2	1.4
2. Ընդամենը տեղաբաշխված միջոցներ, այդ թվում՝	8.1	91.9	20.0	80.0	19.8	80.2	24.1	75.9	10.7	89.3	14.1	85.9	29.0	71.0	19.6	80.4	16.3	83.7	8.1	91.9	20.0	80.0	19.8	80.2	24.1	75.9
2.1. ժամկետանց	2.4	0.0	5.8	0.0	4.8	0.0	3.2	0.0	1.8	0.0	2.9	0.0	2.3	0.0	4.6	0.0	3.7	0.0	2.4	0.0	5.8	0.0	4.8	0.0	3.2	0.0
2.2. միջազգային ծրագրերով տրամադրված վարկեր	0.8	13.1	1.9	13.3	2.1	8.8	0.6	11.6	0.2	9.2	0.7	28.7	0.6	12.4	0.0	3.8	1.0	13.2	0.8	13.1	1.9	13.3	2.1	8.8	0.6	11.6
2.3. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկեր , (ներառյալ՝ միջազգային ծրագրերով)	0.8	15.8	5.7	24.7	9.9	25.9	1.5	16.4	1.4	26.4	0.1	15.6	1.6	19.8	0.7	16.2	2.8	22.1	0.8	15.8	5.7	24.7	9.9	25.9	1.5	16.4
3. Ակտիվների քանակը	33.4	66.6	35.7	64.3	32.0	68.0	47.4	52.6	40.1	59.9	32.9	67.1	32.7	67.3	31.8	68.2	32.8	67.2	33.4	66.6	35.7	64.3	32.0	68.0	47.4	52.6
3.1. մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	33.3	63.7	35.5	61.4	31.9	65.2	47.2	50.3	40.0	58.3	32.7	65.1	32.6	64.7	31.5	62.9	32.4	62.9	33.3	63.7	35.5	61.4	31.9	65.2	47.2	50.3
3.2. 5001-10000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.1	1.4	0.1	1.4	0.1	1.4	0.1	1.1	0.0	0.9	0.1	1.1	0.1	1.5	0.1	2.1	0.2	1.7	0.1	1.4	0.1	1.4	0.1	1.4	0.1	1.1
3.3. 10001-25000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.0	0.9	0.0	1.0	0.0	0.9	0.1	0.7	0.0	0.5	0.0	0.6	0.0	0.8	0.0	2.0	0.1	1.4	0.0	0.9	0.0	1.0	0.0	0.9	0.1	0.7
3.4. 25001-50000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.2	0.0	0.1	0.0	0.2	0.0	0.6	0.0	0.6	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.3
3.5. 50001-ից ավելի ԱՄՆ դոլարին համարժեք գումար	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.0	0.2	0.1	0.6	0.1	0.5	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.2	0.0	0.2

Հավելված 1.4

Ընդհանուր վարկային ներդրումների ներմարզային ճյուղային կառուցվածքն ըստ արժույթների (30.06.15 թ.)

(մարզերի մասնաբաժինները հաշվարկված են մարզի ընդհանուր վարկային ներդրումների նկատմամբ)

%

Ցուցանիշներ	ընդամենը		Արագածոտնի մարզի		Արարատի մարզի		Արմավիրի մարզի		Գեղարքունիքի մարզի		Կոտայքի մարզի		Լոռու մարզի		Սյունիքի մարզի		Տավուշի մարզի		Վայոց ձորի մարզի		Ք. Երևան		Մարզերում	
	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով	ընդամենը	իսկ դրանցից՝ եվրոյով
1. Ըստ ճյուղերի տրամադրված միջոցներ																								
1.1. արդյունաբերություն, այդ թվում՝	2.6	14.5	2.8	29.9	3.2	15.0	3.0	25.6	5.7	15.0	1.6	13.8	1.2	21.9	4.2	6.8	19.2	8.7	17.4	13.1	6.7	25.8	7.7	12.6	3.5	15.7
հանքագործական	3.3	5.5	0.0	31.5	0.8	1.1	0.0	15.6	0.4	1.5	0.0	0.0	0.2	49.9	0.2	0.0	0.0	0.4	0.0	1.4	10.0	51.4	18.1	22.9	3.5	11.9
էներգետիկա	4.6	29.0	0.2	9.4	0.7	17.2	0.3	12.7	23.4	30.1	5.2	48.5	1.0	12.7	27.1	37.8	67.1	14.9	27.7	34.7	9.2	15.4	7.0	30.9	6.5	25.6
սննդամթերք	2.7	22.6	7.1	40.4	9.8	36.8	8.2	32.1	1.7	28.5	0.7	26.9	0.7	7.6	5.8	9.4	0.1	13.6	28.6	6.3	0.7	0.7	2.3	2.9	3.9	22.0
թեթև	1.0	4.9	0.4	0.3	0.4	0.6	0.6	3.7	0.4	3.3	1.5	5.6	0.4	8.3	2.1	1.3	1.1	0.3	0.0	0.0	0.1	0.2	1.0	1.7	0.8	3.8
քիմիական	0.0	1.3	0.3	2.0	0.1	0.1	0.0	19.2	0.0	0.3	0.0	0.0	0.0	0.5	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.1	2.1
շինանյութերի	1.4	7.8	0.1	2.2	2.1	12.0	0.5	3.0	0.9	1.9	0.4	0.6	0.9	1.1	1.1	8.1	0.2	1.5	0.7	0.2	0.0	0.1	0.4	0.8	1.0	5.6
թանկարժեք իրեր	1.1	0.8	0.0	0.1	0.4	1.5	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.3	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.7	0.5
մետալուրգիա	0.0	3.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.7	0.0	12.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.4
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	0.5	1.6	0.0	0.1	0.2	0.2	0.0	1.2	0.0	0.7	0.0	0.3	0.7	0.2	0.0	4.5	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.1	0.1	0.3	1.1
արդյունաբերության այլ ճյուղեր	0.7	8.1	0.5	5.5	2.9	13.2	0.8	1.9	0.7	6.2	2.4	7.0	1.4	1.8	1.6	1.0	0.3	0.1	0.1	0.2	0.6	11.4	8.8	2.9	1.4	6.8
1.2. գյուղատնտեսություն, այդ թվում՝	0.1	1.1	10.9	12.7	3.8	15.5	13.9	17.7	8.8	17.5	6.7	10.1	3.6	5.1	6.3	10.8	4.7	8.3	5.4	8.8	5.4	8.7	1.0	1.1	2.3	4.3
անասնապահություն	1.8	10.0	9.4	12.7	15.4	22.9	6.6	24.7	26.9	43.6	20.6	21.3	34.3	39.1	26.1	32.8	36.3	46.4	35.8	32.2	30.2	23.3	32.4	37.9	16.3	24.4
բուսաբուծություն	7.3	81.0	36.8	41.1	4.1	57.6	37.3	31.3	6.6	23.0	19.4	38.7	6.9	19.7	10.6	30.5	0.0	17.2	2.4	29.6	8.2	38.3	14.2	15.4	18.2	41.0
1.3. շինարարություն	1.5	5.2	0.6	0.1	0.3	3.5	0.1	1.2	1.5	0.6	0.4	3.9	0.5	6.5	0.2	0.3	1.4	1.1	0.5	0.6	0.5	1.1	1.0	6.6	1.2	4.4
1.4. տրանսպորտ և կապ	1.0	2.8	0.1	0.9	1.5	0.3	0.4	0.5	0.0	0.1	0.1	1.4	0.2	0.4	0.1	0.0	0.0	0.0	0.2	0.0	0.1	0.0	0.0	0.4	0.8	1.9
1.5. առևտուր, այդ թվում՝	2.5	20.1	3.3	9.7	2.3	13.5	2.3	3.8	2.9	6.2	4.3	10.8	4.6	9.2	4.5	7.6	3.4	3.0	1.6	4.2	4.7	5.3	2.2	1.9	2.7	15.5
մեծածախ առևտուր	4.4	52.8	6.4	35.3	4.1	57.3	4.0	16.9	6.7	28.4	2.8	30.9	4.4	17.1	2.0	17.3	5.2	0.3	1.0	3.0	21.1	19.0	13.3	12.0	4.7	48.3
մանրածախ առևտուր	6.5	35.2	18.9	38.8	10.4	28.3	33.4	45.5	25.2	39.7	25.7	38.6	29.2	48.2	35.3	45.3	47.8	41.4	26.7	69.3	25.7	34.0	41.2	33.4	10.2	35.9
1.6. հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	0.8	8.2	0.2	1.2	0.7	2.2	0.1	1.0	0.6	5.7	0.5	4.0	0.9	1.2	1.3	4.7	0.8	16.3	0.2	2.8	0.4	4.0	3.3	0.5	0.9	6.3
1.7. ֆինանսական հատված	3.0	2.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.0	9.1	2.0	1.9
1.8. սպառողական վարկեր, այդ թվում	12.4	6.0	21.0	1.9	22.9	4.9	21.7	3.1	19.7	2.4	29.1	4.7	31.7	4.9	41.8	4.0	25.7	2.6	33.9	1.0	27.6	2.2	10.5	0.3	16.4	4.9
1.9. հիփոթեքային (բնակարանային) վարկեր	4.0	5.6	2.0	1.3	3.0	2.2	2.6	2.0	2.4	1.8	3.3	3.4	4.2	2.5	2.7	3.1	1.7	1.2	5.2	1.8	3.8	1.9	3.3	4.2	3.7	4.5
1.10. տնտեսության այլ ճյուղեր	0.6	5.9	0.3	1.3	0.2	5.0	0.4	0.8	8.4	0.8	0.5	1.4	0.5	1.0	0.5	1.1	1.1	0.7	0.4	2.9	0.6	1.1	2.3	31.1	0.9	6.2
